ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Ս Ա Ր Ա Կ Ա Պ   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

գ.Սարակապ <<1>><<04>>2015թ.

N 10

ՀՀ Շիրակի մարզպետ

Պարոն Ֆ. Ցոլակյանին

Ձեզ ենք ուղարկում ՀՀ Շիրակի մարզի Սարակապի համայնքի ավագանու 2015թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ն , 2-Ն 3-Ն և փետրվարի 20 –ի թիվ 4 որոշումները:

Առդիր 5 էջ:

Սարակապ համայնքի ղեկավար՝ Ա. Խաչատրյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 3176-15
02. 04 2015

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1_Ն

<<20 >> հունվարի 2015 թվականի

գյուղ Սարակապ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3_րդ կետի ,<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով , Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապ համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի համայնքի ղեկավարի հաշվետվությունը ՝ համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ համաձայն հավելվածի:

*Համայնքի ավագանու անդամներ՝*

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| 5 | 0 | 0 |

Գևորգ Ղզրոյան կողմ
Միսակ Ծառուկյան կողմ
Հրաչյա Մակարյան կողմ
Արշալույս Հակոբյան կողմ
Արամ Կիրակոսյան կողմ

ՍԱՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 -ը հունվարի 2015թ.
Գ. Սարակապ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Սարակապի համայնքի
ավագանու 2015 թվականի հունվարի 20-ի
Թիվ 1- Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

| Հհ | Հոդվածը Ըստ տնտեսագիտական դասակարգման | Հոդվածը | Ընդունված Բյուջեն /հազ. դրամ/ | Փաստացի կատարված /հազ. դրամ/ | Կատարման % |
|---|---|---|---|---|---|
| | ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱՍ | | | | |
| 1 | Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի համար | | 2592.0 | 835.8 | 32.24 |
| 2 | Գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար | | 3.2 | 0.4 | 12.5 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 675.0 | 709.1 | 105.05 |
| 4 | Տեղական տուրք / համայնքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ / ծխախոտի արտադրանքի վաճառքի ,իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 40.0 | 0 | 0 |
| 5 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճար | | 3156.6 | 463.9 | 14.7 |
| 6 | Տեղական վճար | | 10.0 | 0 | 0 |
| | Ընդամենը սեփական եկամուտներ | | 6476.8 | 2009.2 | 31.02 |
| | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 7659.7 | 7659.7 | 100 |
| | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ | | 0 | 0 | 0 |
| | **Ընդամենը եկամուտներ** | | **14136.5** | **9668.9** | **68.4** |
| | | | | | |
| | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ | | 14136.5 | 8173.6 | 57.82 |
| 1 | Աշխատողներին աշխատավարձ | 4111 | 6800.0 | 6302.7 | 92.69 |
| 2 | Էլեկտրաէներգայի ծառայություն | 4212 | 700.0 | 288.9 | 41.27 |
| 3 | Կապի ծառայություն | 4214 | 150.0 | 110.0 | 73.33 |
| 4 | Ներքին գործուղումներ | 4221 | 450.0 | 79.6 | 17.69 |
| 5 | Համակարգչային ծառայություն | 4232 | 20.0 | 14.4 | 72.0 |
| 6 | Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 100.0 | 78.0 | 78.0 |
| 7 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 460.0 | 460.0 | 100 |
| 8 | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 420.0 | 0 | 0 |
| 9 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 2000.0 | 0 | 0 |
| 10 | Մեքենաների և սարքավ. ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 80.0 | 35.0 | 43.75 |
| 11 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 110.0 | 98.0 | 89.1 |
| 12 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 500.0 | 175.0 | 35.0 |
| 13 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 1300.0 | 532.0 | 40.92 |
| 14 | Պարտադիր վճարներ | 4823 | 10.0 | 0 | 0 |
| 15 | Պահուստային միջոցներ | 4891 | 1036.5 | 0 | 0 |
| | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | | 2612.3 | 0 | 0 |
| 16 | Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 1000.0 | 0 | 0 |
| 17 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 1382.3 | 0 | 0 |
| 18 | Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 230.0 | 0 | 0 |
| | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | | 0 | -111.3 | |
| | Հողի իրացումից մուտքեր | 8411 | 0 | -111.3 | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 2 -Ն

<< 20 >> հունվարի 2015 թվական        գյուղ Սարակապ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՉԱՓԱՔԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարվող վերաբաշխումների (փոփոխությունների) չափաքանակը սահմանել մինչև 30 տոկոս:

***Համայնքի ավագանու անդամներ՝***

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| 5 | 0 | 0 |

Գևորգ Ղզրոյան   կողմ ________
Միսակ Ծառուկյան   կողմ ________
Հրաչյա Մակարյան   կողմ ________
Արշալույս Հակոբյան   կողմ ________
Աղասի Կիրակոսյան   կողմ ________

ՍԱՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ   ԱՐՇՐՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20-ը հունվարի 2015 թվական
գ. Սարակապ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3_Ն

<<20>> հունվարի 2015 թվական

գյուղ Սարակապ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5_Ի ԹԻՎ 20_Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրեքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրաետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի դրույթներով. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի համայնքի 2014 թվականի դեկտեմբերի 5 –ի , << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 20-Ն որոշման մեջ կատարել փոխություն.

Եկամտային մաս `

Բյուջեի վարչական մասի հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար տող 1112 <<2572.2>> թիվը փոխարինել <<2627.4 >> թվով , գույքանարկ փոխադրամիջոցների համար տող 1121 <<889.2>> թիվը փոխարինել <<1063.3>> թվով , համայնքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի , իսկ հանրային սննդի օբյեկտներում ` ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տող 1137 << 40.0>> թիվը փոխարինել <<80.0>> թվով, պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ տող 1251 << 8690.3>> թիվը փոխարինել << 8689.6>> թվով, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ տող 1331 <<3945.1 >> թիվը փոխարինել <<3676.5 >> թվով:

Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդ տող 8191 <<1495.3 >> թիվը փոխարինել <<0>> թվով, համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ տող 8194 <<2723.7>> թիվը փոխարինել <<4219.0 >> թվով:

Ծախսային մաս`

Բյուջեի ֆոնդային մասի բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, <<շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> 5113 հոդվածի << 0>> թիվը փոխարինել << 1719.0>> թվով, <<վարչական սարքավորումներ>> 5122 հոդվածի << 0>> թիվը փոխարինել << 250.0>> թվով, բաժին 04, խումբ 5, դաս 1, ծրագիր 51 <<այլ մեքենաներ և սարքավորումներ >> 5129 հոդվածի << 0 >> թիվը փոխարինել << 250.0>> թվով, բաժին 06, խումբ 4, դաս 1, ծրագիր 51 <<շենքերի և շինությունների կառուցում >> 5112 հոդվածի << 0 >> թիվը փոխարինել << 2000.0>> թվով,

***Համայնքի ավագանու անդամներ՝***

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| 5 | 0 | 0 |

Գևորգ Ղզրոյան կողմ

Միսակ Ծառուկյան կողմ

Հրայր Մակարյան կողմ

Արշալույս Հակոբյան կողմ

Հրանտ Կիրակոսյան կողմ

Սարակապ համայնքի ղեկավար՝ Ա. Խաչատրյան

<<20 >> հունվարի 2015 թվական

գյուղ Սարակապ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4

<<20>> փետրվարի 2015 թվական

գյուղ Սարակապ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՄՄԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.01 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28.1-րդ կետի, Հայաստանի Հանրաետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 8-րդ հոդվածի1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետի դրույթներով և կարևորելով հեռուստառադիոհեռարձակման որակի բարելավման նպատակով վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում համայնքում հեռուստակայան տեղադրելու անհրաժեշտությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի համայնքի ավագանին

որոշում է

Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային / կցվում է որոշմանը/, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.01 հեկտար արոտը / կադաստրային ծածկագիրը՝ 08-103-0102-0108/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա՝ կապի գործառնական նշանակությամբ՝<< Հայաստանի հեռուստատեսության և ռադիոհաղորդիչ ցանց>> փակ բաժնետիրական ընկերության կողմից այդ հողամասում հեռուստակայան տեղադրելու համար:

***Համայնքի ավագանու անդամներ՝***

Գևորգ Ղզրյան կողմ

Միսակ Ծառուկյան կողմ

Հրաչյա Մակարյան կողմ

Արշալույս Հակոբյան կողմ

Աղասի Կիրակոսյան կողմ

Սարակապ համայնքի ղեկավար՝ Ա. Խաչատրյան

<<20>> փետրվարի 2015 թվական

գյուղ Սարակապ